

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՄԻՆԶԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ, ՄԻՆԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՆԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2014 թվականի N 65-Ն

2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ՄԻՆԶԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ, ՄԻՆԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՆԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ, 13-րդ հոդվածի 1-ին, 14-րդ հոդվածի 2-րդ, 16-րդ հոդվածի 1-ին և 39-րդ հոդվածի 4-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով «Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին վճարվում են՝

ա. ընտանեկան նպաստը,

բ. սոցիալական նպաստը,

գ. հրատապ օգնությունը՝ ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնություն և եռամսյակային հրատապ օգնություն.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար նախատեսված գումարների 97 տոկոսը նպատակաուղղվում է ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի համար, ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնությանը, իսկ 3 տոկոսը՝ եռամսյակային հրատապ օգնության վճարմանը:

2. Հաստատել ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության, վճարման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափերն ըստ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցները՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Սահմանել ընտանեկան նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորը, ընտանեկան նպաստի բազային մասի չափը, 18 տարին չլրացած անդամին տրվող հավելման տարբերակման պայմաններն ու տարբերակված չափերը՝

1) ընտանեկան նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը՝ 30.00 միավոր.

2) ընտանեկան նպաստի բազային մասը՝ 16000 դրամ.

3) 30.01-35.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ,

բ. չորս և ավելի՝ 18 տարին չլրացած անդամ ունեցող ընտանիքների (այսուհետ՝ բազմազավակ ընտանիք) յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

գ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին

չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

դ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ.

4) 35.01-39.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

գ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

դ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ.

5) 39.01 և ավելի անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ,

գ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

դ. բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 8000 դրամ:

4. Սահմանել սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորը և չափը՝

1) սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը՝ 30.00 միավոր.

2) սոցիալական նպաստի չափը՝ 16000 դրամ:

5. Սահմանել հրատապ օգնությունների չափերը՝

1) միանվագ հրատապ օգնության չափերը՝

ա. երեխայի ծննդյան դեպքում՝ 50000 դրամ,

բ. երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ 25000 դրամ,

գ. ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 50000 դրամ.

2) եռամսյակային հրատապ օգնության ամսական չափը՝ 16000 դրամ:

6. Սահմանել՝

1) մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը՝ 18000 դրամ.

2) մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ 50000 դրամ, իսկ ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 430000 դրամ:

7. Թույլատրել սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին Հայաստանի Հանրապետության նախարարություններից և գերատեսչություններից ստացված տեղեկատվության, ինչպես նաև ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի հասցեականության մեծացմանն ուղղված այլ միջոցների կիրառման հետևանքով ազատված ֆինանսական միջոցներն ուղղել եռամսյակային հրատապ օգնություն տրամադրելուն՝ ոչ ավելի, քան նախատեսված ընդհանուր ֆինանսական միջոցների 5 տոկոսի չափով:

8. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի «Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների մինչև 0,2 տոկոսն ուղղել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընտանեկան, սոցիալական նպաստի և հրատապ օգնության նշանակման և վճարման աշխատանքների համար իրականացվող լրացուցիչ ծախսերին (մեթոդական և հրահանգչական նյութերի բազմացման, գրասենյակային ապրանքների, սարքավորումների, տեխնիկայի և նյութերի, գործուղման, կապի, էլեկտրաէներգիայի, տրանսպորտի և այլ ծախսեր):

9. Թույլատրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին 2014 թվականի չորրորդ եռամսյակում, ըստ անհրաժեշտության, կատարել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ֆինանսական միջոցների վերաբաշխում՝

սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների միջև՝ ընդհանուր միջոցների մեկ տոկոսի սահմաններում:

10. Հաստատել մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2014 թ. փետրվարի 3
Երևան

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 65-Ն որոշման

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

Մարզը	Տարածքային մարմինը	2014 թվական			
		2014 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարի բաշխումը (դրամ)	այդ թվում՝ ընտանեկան նպաստի համար նախատեսված միջին ամսական գումար (դրամ)	այդ թվում՝ սոցիալական նպաստի համար նախատեսված միջին ամսական գումար (դրամ)	այդ թվում՝ միանվագ հրատապ օգնությունների, եռամսյակային հրատապ օգնության (3%) համար նախատեսված ամսական գումարի բաշխումը (դրամ)
1	2	3	4	5	6
ԱՐԱՐԱՏԻ	ԱՐԱՐԱՏ	166,568,047	11,388,976	1,873,594	618,100
	ԱՐՏԱՇԱՏ	1,039,121,381	75,254,029	7,332,098	4,007,322
	ՎԵԴԻ	950,633,129	71,417,412	4,175,017	3,626,999
	ՄԱՍԻՍ	977,381,693	71,319,996	6,358,419	3,770,060
	Ընդամենը	3,133,704,250	229,380,412	19,739,128	12,022,481
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ	ԱՇՏԱՐԱԿ	1,012,708,928	73,905,393	6,904,269	3,582,749
	ԱՊԱՐԱՆ	264,741,871	18,756,437	2,242,412	1,062,974
	ԾԱՂԿԱՀՈՎԻՏ	279,534,459	21,742,850	545,850	1,005,838
	ԹԱԼԻՆ	568,392,194	41,907,284	3,334,113	2,124,619
	Ընդամենը	2,125,377,453	156,311,964	13,026,644	7,776,180
ԱՐՄԱՎԻՐԻ	ԱՐՄԱՎԻՐ	847,395,603	61,234,259	6,432,182	2,949,859
	ՎԱՂԱՐՇԱՊԱՏ	1,018,772,152	72,724,901	8,409,045	3,763,733
	ԲԱՂՐԱՄՅԱՆ	259,818,144	19,253,121	1,401,508	996,883
	Ընդամենը	2,125,985,898	153,212,282	16,242,735	7,710,474
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ	ԳԱՎԱՌ	1,037,144,535	77,945,429	4,440,566	4,042,716

	ՍԵՎԱՆ	691,438,251	50,032,763	5,015,922	2,571,170
	ՎԱՐԴԵՆԻՍ	1,119,578,016	82,825,219	6,107,623	4,365,326
	ՃԱՄԲԱՐԱԿ	338,913,300	22,861,932	4,175,017	1,205,825
	ՄԱՐՏՈՒՆԻ	2,264,343,812	174,709,118	4,986,416	8,999,783
	Ընդամենը	5,451,417,915	408,374,462	24,725,544	21,184,820
ԼՈՌՈՒ	ԹՈՒՄԱՆՅԱՆ	568,476,768	36,344,316	9,087,670	1,941,078
	ՏԱՇԻՐ	486,726,402	33,143,852	5,606,030	1,810,651
	ՎԱՆԱԶՈՐ	2,270,026,709	149,196,610	31,511,792	8,460,491
	ՍՊԻՏԱԿ	1,648,778,480	115,138,684	15,018,260	7,241,263
	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ	1,585,911,014	114,033,757	12,775,848	5,349,647
	Ընդամենը	6,559,919,373	447,857,218	73,999,600	24,803,130
ԿՈՏԱՅՔԻ	ԱԲՈՎՅԱՆ	1,021,715,604	71,831,913	9,589,262	3,721,792
	ՀՐԱԶԴԱՆ	877,039,015	61,955,725	7,907,453	3,223,406
	ՉԱՐԵՆՑԱՎԱՆ	543,798,075	38,282,268	5,015,922	2,018,316
	ՆԱԻՐԻ	795,544,856	59,178,774	4,204,523	2,912,108
	Ընդամենը	3,238,097,550	231,248,680	26,717,160	11,875,623
ՇԻՐԱԿԻ	ԱՐԹԻԿ	972,780,642	71,647,615	5,797,816	3,619,622
	ԱՄԱՍԻԱ	60,467,749	4,329,636	457,334	252,009
	ՄԱՐԱԼԻԿ	371,456,188	27,431,251	2,198,154	1,325,278
	ԱԽՈՒՐՅԱՆ	533,673,800	39,280,714	3,201,338	1,990,765
	ԱՇՈՅՔ	86,676,197	6,133,489	796,646	292,881
	ԳՅՈՒՄՐԻ-1	1,447,710,991	97,385,979	17,629,490	5,627,113
	ԳՅՈՒՄՐԻ-2	1,904,321,171	129,587,517	21,494,700	7,611,213
	Ընդամենը	5,377,086,737	375,796,201	51,575,479	20,718,881
ՍՅՈՒՆԻՔԻ	ԳՈՐԻՍ	654,852,679	47,572,913	4,484,824	2,513,319
	ԿԱՊԱՆ	338,546,229	18,963,314	8,158,249	1,090,622
	ՄԵՂՐԻ	91,850,410	5,104,105	2,212,907	337,189
	ՍԻՍԻԱՆ	219,579,118	15,970,025	1,593,293	734,942
	Ընդամենը	1,304,828,435	87,610,358	16,449,273	4,676,072
ՏԱՎՈՒՇԻ	ԴԻԼԻԶԱՆ	404,383,987	27,540,883	4,647,104	1,510,678
	ԻԶԵՎԱՆ	738,622,768	52,219,193	6,491,193	2,841,511
	ՆՈՅՏԵՄԲԵՐՅԱՆ	322,676,015	21,769,961	4,012,737	1,106,969
	ԲԵՐԴ	396,503,118	28,518,801	3,112,822	1,410,304
	Ընդամենը	1,862,185,888	130,048,838	18,263,857	6,869,462
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ	ԶԵՐՄՈՒԿ	72,029,123	4,780,141	988,432	233,854
	ՎԱՅՔ	153,580,214	10,822,977	1,445,766	529,608
	ԵՂԵԳՆԱԶՈՐ	512,477,358	36,105,882	4,647,104	1,953,460
	Ընդամենը	738,086,694	51,709,001	7,081,301	2,716,922
ԵՐԵՎԱՆԻ	ԱԶԱՓՆՅԱԿ	716,616,524	45,313,879	11,743,158	2,661,006
	ԱՎԱՆ	213,741,630	12,576,377	4,573,341	662,085
	ԱՐԱԲԿԻՐ	324,740,465	12,140,102	13,970,818	950,786
	ԴԱՎԹԱՇԵՆ	212,097,676	14,953,321	1,917,852	803,633
	ԷՐԵՔՈՒՆԻ	629,865,741	39,714,420	10,592,447	2,181,945
	ԿԵՆՏՐՈՆ	531,827,311	26,790,716	15,770,648	1,757,578
	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ	643,656,614	42,432,000	8,866,380	2,339,671
	ՆՈՐ ՆՈՐՔ	546,442,978	32,271,911	11,477,609	1,787,394
	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	69,831,787	4,187,580	1,372,002	259,733

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	98,408,415	6,770,170	1,076,948	353,584
ՇԵՆԳԱՎԻԹ	799,723,266	47,271,402	16,655,811	2,716,392
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ	402,138,599	24,774,854	7,361,603	1,375,093
Ընդամենը	5,189,091,006	309,196,733	105,378,617	17,848,901
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ	37,105,781,200	2,580,746,147	373,199,340	138,202,946

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 65-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻՆԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍԽ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ծնված և 2013 թվականին երեխայի ծննդյան միանվագ նպաստ չստացած անձին՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի (այսուհետ՝ նպաստ) նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները:
2. Նպաստի իրավունք ունի երեխայի ծնողներից մեկը կամ երեխայի որդեգրողը կամ երեխայի խնամակալը (այսուհետ՝ ծնող):
3. Երեխայից հրաժարվելու դեպքում երեխայի ծնողը կորցնում է նպաստի իրավունքը:
4. Նպաստի չափը տարբերակվում է ընտանիքում ծնված երեխայի հերթական թվով: Ընտանիքում ծնված երեխայի թիվը որոշվում է տվյալ երեխայի ծննդյան օրվա դրությամբ՝ ելնելով տվյալ ամուսնական զույգի (միայնակ անձի) խնամքի տակ գտնվող (միևնույն բնակության վայրում փաստացի բնակվող, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային կազմի ժամկետային զինծառայողների և ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների) չամուսնացած չափահաս զավակների, ինչպես նաև երեխաների, այդ թվում՝ որդեգրած և (կամ) խորթ, թվից:
5. Նպաստը նշանակվում է, եթե երեխայի ծնողը դիմել է երեխայի ծննդյան օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում:
6. Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը (այսուհետ՝ տարածքային կենտրոն) նպաստի նշանակման գործերը (այսուհետ՝ նպաստի գործ) պահպանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
7. Նպաստ նշանակելու համար ծնողն իր փաստացի բնակության վայրի տարածքային կենտրոն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) դիմում՝ համաձայն N 1 Ա ձևի, որում դիմողը լրացնում է իր ընտանիքի բնակության վայրի, կացարանի, իր և երեխայի անձը հաստատող փաստաթղթերի տվյալները, իր և երեխայի, բացառությամբ մինչև 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի, հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական ապահովության քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին (սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին) տեղեկանքի համարը, ինչպես նաև նպաստի վճարման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ):
 - 2) երեխայի ծննդյան վկայականը և դրա լուսապատճենը, իսկ 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի համար՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված՝ ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթղթի լուսապատճենը:
 - 3) անհրաժեշտության դեպքում ծնողը ներկայացնում է նաև՝
 - ա. սույն կարգի 4-րդ կետով սահմանված ընտանիքում ծնված երեխայի թիվը որոշելու նպատակով իր խնամքի տակ գտնվող (միևնույն բնակության վայրում բնակվող) չամուսնացած չափահաս զավակների, ինչպես նաև երեխաների (այդ թվում՝ որդեգրած և (կամ) խորթ) ծննդյան վկայականները և դրանց լուսապատճենները,

բ. խնամակալության կամ որդեգրման մասին փաստաթղթի լուսապատճենը,

գ. ռազմաուսումնական հաստատություններում սովորելու մասին տեղեկանքը.

4) նպաստի համար սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանք ներառված են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներում:

8. Տարածքային կենտրոնի ղեկավարը դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում առցանց հարցում է կատարում բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական բազա՝ դիմումում հայտարարագրված բնակչության հասցեի և այնտեղ բնակվող անձանց մասին տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով:

9. Տարածքային կենտրոնի աշխատողը ներկայացված փաստաթղթերը համեմատում է բնօրինակների հետ, լուսապատճենների վրա կատարում է գրառում «խկականի հետ ճիշտ է» ու ստորագրում, դիմումի վրա նշում ստացման ամսաթիվը, ստորագրում և ընդունում է, ծանոթացնում դիմողին նպաստի նշանակման և վճարման կարգին: Ձևշումներով, ուղղումներով կամ թերի լրացված փաստաթղթերը վերադարձվում են:

10. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի ղեկավարը ներկայացված փաստաթղթերը տեսաներաժվում են և լուսապատճեններ չեն պահանջվում:

11. Տարածքային կենտրոնի աշխատողները չեն կարող ներկայացված փաստաթղթերում ուղղում կատարել՝ բացառությամբ ակնհայտ սխալներն ու վրիպակները:

12. Նպաստ նշանակելու համար ծնողի դիմումը հաշվառվում է տարածքային կենտրոնի՝ նպաստի համար առանձնացված դիմումների գրանցման մատյանում:

13. Տարածքային կենտրոնի աշխատողը սույն կարգի 8-րդ կետով սահմանված կարգով ստացած տեղեկատվությունը համեմատում է դիմումում ներառված տեղեկատվության հետ և եռօրյա ժամկետում՝

1) դրանց համապատասխանության դեպքում տեղեկանքը տպում և ներկայացնում է տարածքային կենտրոնի ղեկավարին՝ հաստատման, որը հաստատվելուց հետո տեղադրվում է նպաստի գործի մեջ.

2) դրանց անհամապատասխանության դեպքում դիմողին ուղղորդում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային մարմին (այսուհետ՝ բնակչության տեղական ռեգիստր)՝ նրան տրամադրելով խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման կարգի մասին:

14. Տարածքային կենտրոնի աշխատողը նպաստի նշանակման համար անհրաժեշտ տվյալներն ստանալուց հետո 1-օրյա ժամկետում տեղեկատվական բազայում ամրագրում է ներկայացված տվյալները, որից հետո ստանում և տպում է կարգադրություն՝ համաձայն N 2 Ա ձևի, որը հաստատում է տարածքային կենտրոնի ղեկավարն ստորագրությամբ և կնիքով: Կազմվում է նպաստի գործ, որը համարակալված է կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից տարածքային կենտրոնին նախօրոք տրամադրված համարների տիրույթից:

15. Նպաստը վճարվում է կանխիկ կամ անկանխիկ՝ հաճախորդի դիմումի հիման վրա:

16. Նպաստ ստացողի կողմից նպաստը 3 ամիս անընդմեջ չստանալու դեպքում նրա անունը նպաստի վճարման ցուցակում չի ներառվում:

17. Նպաստ ստացողի անունը նպաստի վճարման ցուցակում չի ներառվում, եթե նա կամ երեխան կրկնակի է հաշվառված նպաստի նշանակման կենտրոնական կամ տեղական տեղեկատվական բազաներում (այսուհետ՝ տեղեկատվական բազա):

18. Սույն կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված գործառնությունները կատարվում են նպաստի նշանակման և վճարման տեղեկատվական բազայի շահագործման ծրագրի միջոցով:

19. Նպաստը վճարելու համար, նպաստ ստացողի դիմելու դեպքում, աշխատողը տեղեկատվական բազայի դիմումների էլեկտրոնային մատյանում կատարում է համապատասխան նշում:

20. Նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար:

21. Նշանակված, սակայն քաղաքացու չստացած նպաստը ծնողին վճարվում է նպաստի նշանակման ամսվան հաջորդած 12 ամիսների ընթացքում՝ ծնողի դիմելու դեպքում:

22. Նպաստի վճարման ցուցակները կազմում և տպում է կազմակերպությունը՝ տարածքային կենտրոնների տրամադրած ամենամսյա տեղեկատվության հիման վրա:

23. Նպաստի վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս (անհրաժեշտության դեպքում երկու ամիսը միասին), կանխիկ վճարման ցուցակներով՝ համաձայն N 3 Ա ձևի (այսուհետ՝ ցուցակ):

24. Տարածքային կենտրոնը կազմակերպությունից կանխիկ վճարման ցուցակները և տիտղոսաթերթերը (ձև N 4 Ա) ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում և հանձնում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վճարող կազմակերպությանը (այսուհետ՝ կանխիկ վճարող կազմակերպություն): Միաժամանակ կանխիկ վճարող կազմակերպությանն է հանձնվում տվյալ ամսվա կանխիկ վճարման ցուցակներում ընդգրկված այն նպաստ ստացողների ցուցակը, որոնց նպաստի վճարումը դադարեցվել է:

25. Տիտղոսաթերթի գլխամասում նշվում է տարածքային կենտրոնի, կանխիկ վճարող կազմակերպության և բնակավայրի անվանումը, ցուցակը կազմելու ամսաթիվը, վճարման ամիսը, ցուցակում ընդգրկված նպաստ ստացողների և երեխաների թիվը, էջերի քանակը, վճարման ենթակա գումարը:

26. Տիտղոսաթերթի վերջում նշվում են տարածքային կենտրոնի ղեկավարի և կանխիկ վճարող կազմակերպության պատասխանատու աշխատողի տվյալները:

27. Տարածքային կենտրոնում՝ ղեկավարի կողմից կանխիկ վճարման ցուցակների հանձնումը կատարվում է կանխիկ վճարող կազմակերպության լիազորած անձին, որոնք ստորագրում են տիտղոսաթերթի երկու օրինակներում, որոնցից մեկը մնում է տարածքային կենտրոնում, մյուսը՝ վճարող կազմակերպությունում:

28. Կանխիկ վճարման ցուցակների էջերը համարակալվում են:

29. Կանխիկ վճարման ցուցակի յուրաքանչյուր էջի գլխամասում նշվում է տարին, ամիսը, տարածքային կենտրոնի, բնակավայրի անվանումը և վճարող կազմակերպության անվանումը, համարը:

30. Կանխիկ վճարման ցուցակը բաղկացած է վճարման մասից և ռեեստրից:

31. Կանխիկ վճարման ցուցակի յուրաքանչյուր էջի վերջում նշվում է այդ էջում գրանցված նպաստ ստացողների թիվը, վճարման ենթակա նպաստի չվճարված և փաստացի վճարված գումարների չափերը, կնիքի և տարածքային կենտրոնի ղեկավարի ու տեղեկատվական բազայի վարչական պատասխանատու աշխատողի ստորագրությունների տեղը:

32. Կանխիկ վճարման ցուցակի վերջում նշվում են 31-րդ կետով սահմանված տեղեկությունների ամփոփ տվյալները:

33. Կանխիկ վճարող մարմինը վճարումն ավարտելուց հետո երեք օրացուցային օրվա ընթացքում տարածքային կենտրոնին են հանձնում լրացված ռեեստրները, փոխադարձ հաշվետվության ակտը՝ 5 օրինակից՝ համաձայն N 5 Ա ձևի: Հաշվետվության ակտի երկու օրինակը հետ է վերադարձվում վճարող կազմակերպությանը երկու օրվա ընթացքում:

34. Տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամսվա վճարման ավարտից հետո 6 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) կամ համապատասխան մարզպետարանի կամ Երևանի քաղաքապետարանի կամ Գյումրու կամ Վանաձորի, Արարատի կամ Զերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմ է ներկայացնում փոխադարձ հաշվետվության ակտի մեկ օրինակը:

35. Ոչ նպաստառուի մեղքով չստացած նպաստի գումարը վերականգնվում է N 6 Ա ձևով՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 8-ը նախարարություն ներկայացված տեղեկատվության հիման վրա:

36. Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությունում սույն կարգի 35-րդ կետով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրությունից հետո համապատասխան փոփոխություններ են կատարվում երեխայի ծննդյան միանվագ նպաստի տեղեկատվական բազայում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան

Սոցիալական ծառայությունների _____

(տարածքային մարմին)

Դ Ի Մ ՈՒ Մ**Քաղաքացի** _____

(անունը, ազգանունը, հայրանունը)

Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական ապահովության քարտի) համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ) չունենալու մասին տեղեկանքի համարը _____

Երեխայի _____

(անունը, ազգանունը, հայրանունը)

Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական ապահովության քարտի) համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ) չունենալու մասին տեղեկանքի համարը _____

Բնակության վայրը _____

Հեռախոսահամարը -----

Նպաստի վճարման եղանակը՝ կանխիկ ☐անկանխիկ ☐ _____ , _____

(բանկի անվանումը)

(հաշվի համարը)

Հանդիսանալով ----- խնդրում եմ նշանակել

նշել կարգավիճակը (ծնողը, խնամակալը, որդեգրողը)

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ:

Ներկայացնում եմ պահանջվող հետևյալ փաստաթղթերը (կատարել «V» նշում)՝

1) Երեխայի (երեխաների) ծննդյան վկայականի պատճենը ☐2) 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի համար՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթղթի պատճենը ☐3) խնամակալության կամ որդեգրման մասին փաստաթղթի պատճենը ☐4) տեղեկանք ռազմաուսումնական հաստատությունում սովորելու մասին ☐

Ընդամենը ----- էջ:

Էջերի քանակը

1. Անկանխիկ վճարման դեպքում անհրաժեշտ է նշել բանկի անվանումը և բանկային հաշվի համարը:

2. Տեղյակ եմ, որ ներկայացված փաստաթղթերում նպաստի իրավունք տվող ոչ հավաստի տեղեկությունների հայտնաբերման դեպքում ավելի վճարված գումարները ենթակա են վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման:

Դիմող _____ 20 թ.

ստորագրությունը

Ընդունեցի դիմումը և փաստաթղթերը _____

(սպասարկող մասնագետի անունը, ազգանունը, ստորագրությունը)

20 թ.

(Լրացվում է մեկից ավելի երեխաների տվյալները ներկայացնելիս)

Երեխայի _____

(անունը, ազգանունը, հայրանունը)

Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական ապահովության քարտի) համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ) չունենալու մասին տեղեկանքի համարը _____

Երեխայի _____
(անունը, ազգանունը, հայրանունը)

Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական ապահովության քարտի) համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ) չունենալու մասին տեղեկանքի համարը _____

Երեխայի _____
(անունը, ազգանունը, հայրանունը)

Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական ապահովության քարտի) համարը _____

Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտ) չունենալու մասին տեղեկանքի համարը _____

Ձև N 2 Ա

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն

Քաղաքացի -----ի
(անունը, ազգանունը, հայրանունը)

Բնակության վայրը -----

նշանակել երեխայի ծննդյան միանվագ նպաստ՝ վճարելով ----- դրամ
(գումարի չափը)

----- երեխայի համար,
(երեխաների թիվը)

Սպասարկող աշխատող -----
(անունը, ազգանունը, հայրանունը) (ստորագրությունը)

Սոցիալական ծառայությունների _____

տարածքային մարմնի ղեկավար -----
(անունը, ազգանունը, հայրանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

« » _____ 20 թ.

Ձև N 3 Ա

Ց Ո Ւ Ց Ա Վ

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ԿՈՂՄԻՑ _____ ԵՎ
ՆԱԽՈՐԴ ԱՄԻՍՆԵՐԻ

ԾՆՆԴՑԱՆ ՆՊԱՍՏ
_____.20 թ

Տարածքային
մարմին
001

ԵՐԵՒԱՅԻ ԾՆՆԴՑԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ

ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ 1 001 Վճարող/մասնաճյուղ

Վճարող/մասնաճյուղ
ԸՆԴԱՄԵՆԸ 4 ԷՋ, ԷՋ
1

Բնակավայրի
անվանումը

Բնակության վայրը		Ազգանունը, անունը, հայրանունը	սոցիալա- կան քարտի համարը կամ նշում սոցիալա- կան քարտ չունենալու մասին	գործի համարը	անձնագրի սերիան, համարը	Անցած ամիսների			Հունվար ամսվա				N	գործի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Հունվար	
2-նրը	բնակ.					գումարը (դրամ)	ստորա- գրությունը	ստորա- գրությունը	գումարը (դրամ)	ստորա- գրությունը	օրը	ստորա- գրությունը				գումարը (դրամ)	օրը
		Աղաջանյան Անահիտ Ա.		5800072		***			50000				1.	5800072		50000	

		Աղաջանյան Անահիտ Հ.		5800912		***			50000			2.	5800912		50000	
		Աղաջանյան Անահիտ Մ.		5800921		***			50000			3.	5800921		50000	
												4.				
												5.				
												6.				
												7.				
												8.				
												9.				
												10.				
												11.				
												12.				

Էջում ընդամենը ընտանիք դրամ

Ընդ. ընտ. դրամ

Ընդամենը վճարվել է ընտանիք դրամ

Վճարվել է ընտ. դրամ

Կ. Տ.
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԻ ԴԵԿԱՎԱՐ _____
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏՈՂ _____

Ձև N 4 Ա

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

Օրինակ ԴԻԼԻԶԱՆԻ Տարածքային մարմին 22.01.2014թ.
Վճարող մարմին թիվ 255
Վճարման Անցողիկ և
ցուցակ հունվար
Գործերի քանակը 68
Երեխաների թիվը 70
Էջերի քանակը 4
Անցողիկ գումար
ՀՈՒՆՎԱՐ 3880000

Էջի համարը	Գործերի քանակը	Երեխաների թիվը	Անցողիկ	Հունվար
1.	20	20		1000000
2.	10	11		550000
3.	18	18		900000
4.	20	21		1430000

Հանձնեցի

Ընդունեցի

Վճարող մարմնի ղեկավար

Վճարող մարմնի ղեկավար

Կ. Տ.
_____ 20 թ.

Կ. Տ.
_____ 20 թ.

Ձև N 5 Ա

Փ Ո Խ Ա Դ Ա Ր Ձ Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Կ Տ

----- վճարող կազմակերպության ----- և սոցիալական
ծառայությունների ----- տարածքային մարմնի միջև ----- ամսվա երեխայի
ծննդյան միանվագ նպաստի գումարների փոխհաշվարկի վերաբերյալ

	Ամսաթիվը	Երեխայի ծննդյան միանվագ նպաստը
պարտք վճարումից առաջ	վճարող մարմինը տարածքային մարմնին	
	տարածքային մարմինը	

	վճարող մարմնին		
Ֆինանսավորվել է այդ թվում՝			
1.			
2.			
Հետ գանձում			
Վճարում (սկիզբ-վերջ)			
այդ թվում՝			
1. ամսվա վերջ			
2. ամսվա սկիզբ			
պարտք վճարումից հետո	վճարող մարմինը տարածքային մարմնին		
	տարածքային մարմինը		
	վճարող մարմնին		

Պարտքի գումարը -----
(նշել բառերով)

_____վճարող մարմնի ղեկավար _____ _____	Սոցիալական ծառայությունների _____ տարածքային մարմնի ղեկավար _____ _____
Հաշվապահ _____ Կ. Տ.	Պատասխանատու աշխատող _____ Կ. Տ.
_____ 20 թ.	_____ 20 թ.

Ձև N 6 Ա

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սոցիալական ծառայությունների _____ տարածքային մարմնի
կողմից 20 թ. _____ ամսվա վճարման ցուցակներում չստացած
երեխայի ծննդյան միանվագ նպաստի գումարի վերականգնման

N N ը/կ		Երեխայի ծննդյան միանվագ նպաստ		
		նպաստառուների թիվը	երեխաների թիվը	գումարի չափը
1.	Տարածքային մարմնի սխալ			
2.	Որդեգրման կամ խնամակալության որոշում			
3.	Դատարանի որոշում			
4.	Համակարգի աշխատողի մեղք			
5.	Հարգելի պատճառով չստացած			
	Ընդամենը (1+...+5)			

Տարածքային մարմնի ղեկավար _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)
_____ 20 թ.

Կ.Տ.
Նախարարության աշխատող _____ 20 թ.
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կազմակերպության աշխատող _____ 20 թ.
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

